

8. — Նուիրական մասունքները Գողգոթայի մէջ. — Նախընթաց հատուածի մէջ գրեցինք (էջ 45) թէ նուիրական մասունքները կը պահուէին նախապէս Գողգոթայի մատրան գաւիթը՝ յետոյ նոյն մատրան վերի յարկը:

Ուղեգիր Ֆէլիքս Ֆապրի 1484 ին կը գրէ. «Հոն կը պահուէին Քրիստոսի Ս. Խաչը և Յիսուսի չարչարանաց միւս գործիքները որ գտնուեցան Ս. Հեղինէին կողմէն: Երբեմն հոն կախուած էր մեծ շղթայ մը որ մեր Տիրոջ Յիսուսի պարանոցին կապուեցաւ, երբ Ան պարտէզին մէջ կալանաւորուեցաւ. նոյն շղթան կը կապուէր նաև պարանոցին այն ուխտաւորներուն որ եկեղեցին կ'այցելէին և անոր միջոցաւ շատ հրաշքներ կը գործուէին. հոն ցոյց կը տրուէր նաև արծաթեայ մեծ բաժակ մը զոր Յիսուս գործածած էր վերջին ընթրիքին՝ աշակերտներուն հետ եւ որուն համար Ան ըսաւ. «այս բաժակ է նոր ուխտ խմով արեամբ վասն բազմաց հեղլոյ» (Ղուկ. ԻԲ. 30): 700 ին, Արգուլֆ եպիսկոպոս՝ Գողգոթայի մատրան մէջ, փոքր սեղանի մը վրայ, նեղ խցիկի մը մէջ տեսած է մեր Տիրոջ բաժակը, շօշափած և համբուրած է զայն (E. T. P. էջ 3): Հոն էր նաև այն կոնքը որուն մէջ Յիսուս լուաց իր աշակերտներուն ոտքերը վերջին ընթրիքին: Այս տեղ կը մնար այն շատ թանկագին Վարչամակը զոր Ս. Կոյսը Յիսուսի գլուխը կապած էր, երբ Ան խաչէն վար առնուեցաւ: Այս Վարչամակի մասին կը կարգանք Յովհ. Աւետարանին մէջ (Ի. 6). «Եկն և Սիմոն Պետրոս՝ որ գայր զկնի նորա, և եմուս

---

հանելով արեւնի ծիրսնին՝ պատաստուն հանդերձներով Ս. Խաչը ուսին առաւ, բացուեցաւ դուռը եւ ելաւ Գողգոթա (Հանգ. էջ 215):